Ուժի մեջ է 20.11.2020թ-ից

Հավելված 2

| | | | |
|---|---|---|---|
| **Ֆիզիկական անձանց երկրորդային շուկայից ավտոմեքենայի ձեռքբերման վարկերի տրամադրման պայմաններ** | | | |
| 1 | **Հիմնական պայմաններ** | | |
| 1.1 | Վարկի նպատակ | Սպառողական | |
| 1.2 | Վարկի արժույթ | ՀՀ դրամ | |
| 1.3 | Վարկի ձևակերպման վայր | Կազմակերպության մասնաճյուղերում, կազմակերպության հետ համագործակցող/գործընկեր կազմակերպության գործունեության վայրում | |
| 1.4 | Վարկի նվազագույն գումար | 350,000 ՀՀ դրամ | 5,000,001 ՀՀ դրամ |
| 1.5 | Վարկի առավելագույն գումար | 5,000,000 ՀՀ դրամ | 20,000,000 ՀՀ դրամ |
| 1.6 | Տարեկան տոկոսադրույք | 19,00% | |
| 1.7 | Վարկի տրամադրման միանվագ վճար*/ Վարկի արագ տրամադրման միանվագ վճար** | 0% / վարկի գումարի 5%-ի չափով | 0% / վարկի գումարի 4%-ի չափով |
| 1.8 | Վարկի ամսական սպասարկման միջնորդավճար | 2.3% հաշվարկված վարկի ժամանակացույցով սահմանված նախորդ մարման օրվա դրությամբ վարկի մնացորդային գումարի նկատմամբ | |
| 1.9 | Տարեկան փաստացի տոկոսադրույք | 50.75%-58.87% | |
| 1.10 | Ժամկետ | 24 - 120 ամիս | |
| 1.11 | Վարկային հայտի ուսումնասիրության վճար | անվճար | |
| 1.12 | Կանխավճար | Մեքենայի շուկայական արժեքի 0 %-ից սկսած | |
| 1.13 | Վարկի վճարման օրվա տեղափոխման լրացուցիչ ծառայություն*** | Վարկի մարման ժամանակացույցով նախատեսված՝ տվյալ ամսվա վճարման ենթակա գումարի 50%-ի չափով: | |
| 2 | **Ընդհանուր պայմաններ** | | |
| 2.1 | Վարկառուին/գրավատուին ներկայացվող պահանջներ | 18-70 տարեկան ՀՀ քաղաքացի հանդիսացող, ՀՀ-ում բնակվող ֆիզիկական անձ՝ բացառությամբ Գեղարքունիքի և Տավուշի մարզերում փաստացի բնակվող անձանց: | |
| 2.2 | Գրավի սեփականատեր | Վարկառու | |

| | | |
|---|---|---|
| 2.3 | Գրավի առարկային ներկայացվող պահանջներ (ստուգվում է վարկի տրամադրմա պահին) | - ԱՊՊԱ պայմանագրի վավերականություն նվազագույնը 30 օր ավտոմեքենայի ձեռքբերումից հետո,<br>- Վավեր տեխզննման կտրոնի առկայություն ավտոմեքենայի ձեռքբերումից հետո,<br>- Մոգո-ի կողմից ընդունելի գրավ գնահատված կամայական մակնիշի կամ տարեթվի արտադրության ավտոմեքենա (մինչև 3.5 տոննա բեռնատար կամ 8 տեղից ավել թեթև մարդատար ավտոմեքենաներից ընդունելի գրավ են համարվում միայն ոչ ռուսական արտադրության ավտոմեքենաները) |
| 2.4 | ԿԱՍԿՈ ապահովագրություն | չի պահանջվում |
| 2.5 | Գրավի գնահատում | Իրականացվում է Մոգո-ի կողմից՝ անվճար |
| 2.6 | Գրավի ձևակերպում | Իրականացվում է հաճախորդի կողմից՝ Ճանապարհային Ոստիկանությունում (2.000 ՀՀ դրամ) |
| 2.7 | Տույժեր, տուգանքներ | |
| 2.7.1 | ժամկետանց տոկոսագումարների գծով | Օրական 0.11%, բայց ոչ ավել քան օրենքով նախատեսված առավելագույն շեմը |
| 2.7.2 | ժամկետանց վարկի գումարի գծով | Օրական 0.02%, բայց ոչ ավել քան օրենքով նախատեսված առավելագույն շեմը |
| 2.7.3 | վարկի գումարի ամբողջությամբ կամ մասնակի վաղաժամկետ մարման դեպքում | տույժ չի սամանվում |
| 2.8 | Վարկի և տոկոսագումարի մարումներ | վարկի և տոկոսագումարի հանրագումարի ամենամսյա հավասարաչափ մարումներ (անուիտետ) |
| 2.9 | Վարկի տրամադրման եղանակ | անկանխիկ |
| 2.10 | Դրական որոշման և վարկի մերժման գործոններ | Դրական որոշման գործոններ՝ հաճախորդի դրական վարկային պատմություն, վարկարժանություն, եկամուտների բավարար մակարդակ և գրավադրվող մեքենայի բնութագրիչների համապատասխանություն Վարկային կազմակերպության կողմից սահմանված պահանջներին<br>Մերժման գործոններ՝ հաճախորդի բացասական վարկային պատմություն, վարկարժանություն և/կամ եկամուտների ոչ բավարար մակարդակ և/կամ գրավադրվող մեքենայի բնութագրիչների անհամապատասխանություն Վարկային կազմակերպության կողմից սահմանված պահանջներին |
| 2.11 | Որոշման կայացման ժամկետ | 1 աշխատանքային օր |
| 2.12 | Որոշման մասին տեղեկացնելու ժամկետ | 1 աշխատանքային օր |
| 2.13 | Վարկը տրամադրելու ժամկետ * ** | Գրավի պայմանագիրը պետական գրանցում ստանալուց հետո 14 օրացուցային կամ 1 աշխատանքային օր հետո |

* Վարկը տրամադրվում է հաստատումից 14 օրացուցային օր հետո: Այն դեպքում, երբ 14-օրյա ժամկետը լրանալու օրը համընկնում է ոչ աշխատանքային օրվա հետ, ապա վարկը տրամադրվում է դրան հաջորդող աշխատանքային օրը:

** Արագ տրամադրման լրացուցիչ ծառայությունից օգտվելու դեպքում վարկը տրամադրվում է գրավի գրանցմանը հաջորդող մեկ աշխատանքային օրվա ընթացքում:

***Ուշադրություն՝ ծառայության վճարը չի նվազեցվում վարկի մարման ժամանակացույցով սահմանված վճարներից և հանդիսանում է լրացուցիչ ծառայության վճար: Տվյալ ծառայությունից օգտվելու դեպքում մարման ժամանակացույցով սահմանված հերթական վճարը/վճարները, տեղափոխվում է/են վարկի ժամանակացույցով սահմանված ժամկետի ավարտ՝ ավելացնելով ժամկետը այնքան ամսով, որքանով որ կատարվել է երկարաձգում: Երկարաձգումից հետո վարկի հերթական վճարումը կատարվում է երկարաձգմանը հաջորդող ամիս՝ համաձայն մարման ժամանակացույցի:
Այն դեպքում, երբ երկարաձգման օրվա դրությամբ կատարված չէ մարման ժամականացույցով սահմանված երկու հերթական վճարում և հաճախորդի կողմից կատարվում է վարկի երկարաձգում երկու ամսով, ապա հավելյալ ծառայության վճարը կկազմի ժամանակացույցով վճարման ենթակա, սակայն չվճարված **առաջին** վճարի 100%-ը:

***ԶԳՈՒՇԱՑՈՒՄ***՝ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԻ, ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԵՎ ՎԱՐԿԻ ԳՈՒՄԱՐԻ ՄԱՐՈՒՄՆԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԻՆ ՉՎՃԱՐՎԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ՁԵՐ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԿԳՐԱՆՑՎԻ ՎԱՐԿԱՅԻՆ ՌԵԳԻՍՏՐՈՒՄ: ԶԳՈՒՇԱՑՈՒՄ՝ ՁԵՐ ԳՈՒՅՔԸ ԿԱՐՈՂ Է ՕՐԵՆՔՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳՈՎ ԲՌՆԱԳԱՆՁՎԵԼ, ԵԹԵ ԴՈՒՔ ԺԱՄԱՆԱԿԻՆ ՉԿԱՏԱՐԵՔ ՁԵՐ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՐՈՒՄՆԵՐԸ: ՁԵՐ ԿՈՂՄԻՑ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՉԿԱՏԱՐՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ԳՐԱՎԻ ՀԱՇՎԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԱՐԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ՁԵՐ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԾԱԾԿԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԳՐԱՎԸ ԲԱՎԱՐԱՐ ՉԼԻՆԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ՁԵՐ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿՄԱՐՎԵՆ ԱՅԼ ԳՈՒՅՔԻ ՀԱՇՎԻՆ (ԱՌԿԱՅՈՒԹՅԱՆ ԴԵՊՔՈՒՄ):
***ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ***՝ ՁԵՐ ԿՈՂՄԻՑ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՉԿԱՏԱՐԵԼՈՒ ԿԱՄ ԹԵՐԻ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ՎԱՐԿԱՏՈՒՆ 3 ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐ ՀԵՏՈ ԱՅԴ ՏՎՅԱԼՆԵՐԸ ՈՒՂԱՐԿՈՒՄ Է ՎԱՐԿԱՅԻՆ ԲՅՈՒՐՈ, ՈՐՏԵՂ ՁԵՎԱՎՈՐՎՈՒՄ Է ՁԵՐ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ: ԴՈՒՔ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՔ ՎԱՐԿԱՅԻՆ ԲՅՈՒՐՈՅԻՑ ՏԱՐԵԿԱՆ ՄԵԿ ԱՆԳԱՄ ԱՆՎՃԱՐ ՁԵՌՔ ԲԵՐԵԼ ՁԵՐ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ: ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ՎԱՏ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐՈՂ Է ԽՈՉԸՆԴՈՏԵԼ ՁԵԶ՝ ԱՊԱԳԱՅՈՒՄ ՎԱՐԿ ՍՏԱՆԱԼՈՒ ԺԱՄԱՆԱԿ:

***ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ***՝ ՎԱՐԿԻ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ ՀԱՇՎԱՐԿՎՈՒՄ ԵՆ ԱՆՎԱՆԱԿԱՆ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ: ԻՍԿ ՏԱՐԵԿԱՆ ՓԱՍՏԱՑԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԸ ՑՈՒՅՑ Է ՏԱԼԻՍ, ԹԵ ՈՐՔԱՆ ԿԱՐԺԵՆԱ ՎԱՐԿԸ ՁԵԶ ՀԱՄԱՐ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ ԵՎ ԱՅԼ ՎՃԱՐՆԵՐԸ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԺԱՄԿԵՏՆԵՐՈՒՄ ԵՎ ՉԱՓԵՐՈՎ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ: ՏԱՐԵԿԱՆ ՓԱՍՏԱՑԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ ԿԱՐՈՂ ԵՔ ԳՏՆԵԼ www.mogo.am ՀԱՍՑԵՈՎ:

***ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ***՝ ՎԱՐԿ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ԴԻՄԵԼԻՍ ՎԱՐԿԱՏՈՒՆ ՁԵԶ ԿՏՐԱՄԱԴՐԻ ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ՎԱՐԿԻ ԷԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԹԵՐԹԻԿ, ՈՐՈՒՄ ԿՆԵՐԿԱՅԱՑՎԵՆ ՁԵԶ ՏՐԱՄԱԴՐՎԵԼԻՔ ՎԱՐԿԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

***ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ***՝ Ընկերությունը նախքան վարկային պայմանագրի կնքումը տրամադրում է Անհատական թերթիկ՝ համաձայն ՀՀ Կենտրոնական բանկի խորհրդի կողմից հաստատված «Բանկի և ավանդատուի, կրեդիտավորողի և սպառողի հաղորդակցման կարգը, պայմանները, ձևերը և նվազագույն պահանջները» կանոնակարգ 8/05-ի:

***ԴՈՒՔ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՔ ՀԱՂՈՐԴԱԿՑՎԵԼ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՁԵՐ ՆԱԽԸՆՏՐԱԾ ԵՂԱՆԱԿՈՎ՝ ՓՈՍՏԱՅԻՆ ԿԱՊԻ ՄԻՋՈՑՈՎ ԿԱՄ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ: ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՍՏԱՑՈՒՄԸ ԱՄԵՆԱՀԱՐՄԱՐԱՎԵՏՆ Է: ԱՅՆ ՀԱՍԱՆԵԼԻ Է 24/7 ՌԵԺԻՄՈՎ, ԶԵՐԾ Է ԹՂԹԱՅԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԿՈՐՍՏԻ ՌԻՍԿԵՐԻՑ և ԱՊԱՀՈՎՈՒՄ Է ԳԱՂՏՆԻՈՒԹՅՈՒՆ:***
***«ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ «ՁԵՐ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՈՒՆ» ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՐՈՆՄԱՆ, ՀԱՄԵՄԱՏՄԱՆ և ՁԵԶ ՀԱՄԱՐ ԱՄԵՆԱԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՏԱՐԲԵՐԱԿԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԵՇՏԱՑՆՈՂ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ Է»***
***Ձեր ֆինանսական տեղեկատուն՝ www.fininfo.am***
***ԴՈՒՔ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՔ ՑԱՆԿԱՑԱԾ ՊԱՀԻՆ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ՄԱՐԵԼ ՁԵՐ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ, ՈՐԻ ԴԵՊՔՈՒՄ ՏՈՒՅԺԵՐ ԵՎ ԱՅԼ ՎՃԱՐՆԵՐ ՉԵՆ ԳԱՆՁՎՈՒՄ:***
***ԴՈՒՔ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՔ ԱՌԱՆՑ ՈՐԵՎԷ ՊԱՏՃԱՌԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՄԻԱԿՈՂՄԱՆԻՈՐԵՆ ԼՈՒԾԵԼ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԴՐԱ ԿՆՔՄԱՆԸ ՀԱՋՈՐԴՈՂ 7***

***Տարեկան փաստացի տոկոսադրույքը հաշվարկվում է՝ հիմք ընդունելով հետևյալ բանաձևը.***

$$A = \sum_{n=1}^{N} \frac{K_n}{(1+i)^{\frac{D_n}{365}}}$$

որտեղ՝
i - տարեկան փաստացի տոկոսադրույքը (APR).

A - կրեդիտի գումարը /կրեդիտավորողի կողմից սպառողին տրամադրված կրեդիտի սկզբնական գումարը/
n – կրեդիտի մարմանն ուղղված վճարի թիվը
N - կրեդիտի մարմանն ուղղված վերջին վճարի թիվը
Kn-կրեդիտի մարմանն ուղղված n-րդ վճարի գումարը
Dn –կրեդիտի տրամադրման օրից մինչև կրեդիտի մարմանն ուղղված n-րդ վճարի կատարման օրն ընկած ժամանակահատվածը` արտահայտված օրերի թվով

i – տարեկան փաստացի տոկոսադրույքը, որը կարող է հաշվարկվել, եթե հավասարման մյուս տվյալները հայտնի են կրեդիտավորման պայմանագրից կամ այլ կերպ:

***Քաղվածքների, դրանց կրկնօրինակների տրամադրումը, օրենքով նախատեսված դեպքերից բացի, իրականացվում է համաձայն հաճախորդի դիմումի, անվճար, անմիջապես, հաճախորդի նախընտրած տարբերակով:***